հ/հ	Երևույթի տեսակը	Չափի միավոր	անբարենպաստ երևույթի քանակը	վտանգավոր երևույթի քանակը
1.	քամի	դեպք	149	12
2	մառախուղ	դեպք	55	13
3	ձյուն	դեպք	-	1
4	անձրև	դեպք	5	2
5	կարկուտ	դեպք	27	2
6	Սաստիկ շոգ	դեպք	-	23

1.2. Աերոլոգիական դիտարկումներ

Հաշվետու ժամանակաշրջանում բաց է թողնվել 91 ռադիոզոնդ: Հարկ է նշել, որ ռադիոզոնդերի համար բյուջետային ֆինանսավորում չի հատկացվել, դրանք մեզ հատկացվում են ՀՕԿ-ի կողմից և հաշվի առնելով ռադիոզոնդերի սահմանափակ քանակությունը, ռադիոզոնդարկումը, տարվա ընթացքում, իրականացվում է միայն խիստ անհրաժեշտ դեպքերում:

Միաժամանակ կայանում կատարվել են լրիվ ծրագրով օդերևութաբանական և ռադիոմետրիական դիտարկումներ:

1.3. Հելիոերկրաֆիզիկական դիտարկումներ

ա/ Օզոնոմետրիա

Օզոնոմետրիական դիտարկումներն իրականացվել են Ամբերդ բարձր լեռնային դժվարամատչելի օդերևութաբանական կայանում, Դոբսոնի սպեկտրոֆոտոմետրով՝ օրվա ցերեկային ժամերին պարզ երկնքի դեպքում՝ 3 - 5 անգամ:

Ամբերդ օդերևութաբանական կայանից ստացված դիտանյութերի արդյունքները սահմանված կարգով մշակվել և ուղարկվել են ՀՕԿ-ի Օզոնային և ուլտրամանուշակագույն ճառագայթման տվյալների համաշխարհային կենտրոն (WOUDC):

բ/ Ակտինոմետրիա

Ակտինոմետրական դիտարկումներն իրականացվել են 3 կայաններում՝ Երևան-ագրո, Մարտունի, Սևան: Դիտարկումները կատարվել են օրվա ցերեկային ժամերին 3 ժամը մեկ անգամ /Գրինվիչի ժամանակով ժամը 03.30, 06.30, 09.30, 12.30, 15.30/, գիշերային ժամերին՝ մեկ անգամ /Գրինվիչի ժամանակով ժամը 21.30-ին/, արեգակնային կարճալիք

ուղիղ, ցրված ու անդրադարձված ճառագայթման և ճառագայթային հաշվեկշռի վերաբերյալ, կատարվել է նաև գումարային երկարալիք ճառագայթման հաշվեկշռի և ազդեցության մակերևույթի ալբեդոյի հաշվարկ:

Կատարվել է ակտինոմետրական արխիվային տվյալների թվայնացում ըստ համապատասխան ծրագրի:

Կատարվել է Հայաստանի բոլոր մարզերի համար ուլտրամանուշակագույն ճառագայթման ինտենսիվության բնութագրիչների մշակում՝ ինդեքսների տեսքով, ինչպես նաև Արեգակի ակտիվության ու գեոմագնիսական դաշտի վիճակի մասին տեղեկատվության մշակում՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի ամենօրյա տեղեկագրի և ՋԼՄ-ների համար:

Ընդհանուր առմամբ իրականացվել են հելիոերկրաֆիզիկական 11051 դիտարկումներ (նախատեսված դիտարկումների քանակ՝ 16795):

1.4. Ագրոօդերևութաբանական դիտարկումներ և կանխատեսումներ

Ագրոօդերևութաբանական դիտարկումներն իրականացվել են Երևանի մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայանում և օդերևութաբանական ցանցի 39 կայաններում: Ագրոօդերևութաբանական սպասարկումն իրականացվել է կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Հանրապետության պետական կառավարման մարմիններին, մարզպետարաններին, ֆերմային տնտեսություններին և տարբեր կազմակերպություններին տրվել է անհրաժեշտ տեղեկատվություն ագրոօդերևութաբանական պայմանների մասին:

Կազմվել են.

- տասնօրյակային, ամսական (ձմռան ամիսներին), շաբաթական ամփոփ և եռամսյակային (I,II,III) ագրոօդերևութաբանական տեղեկատվություններ,
- տեղեկանք աշնանացան ցորենի ցանքի, աճի և ձմեռման պայմանների վերաբերյալ,
- տեղեկանք գյուղատնտեսական աշխատանքների ժամկետների վերաբերյալ՝
  վաղահաս կարտոֆիլի ցանքի,
  ջերմասեր մշակաբույսերի սածիլման,
- կազմվել են օդի միջին, առավելագույն, նվազագույն, հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանների, տեղումների և ձնածածկույթի գրաֆիկներ,
- ներբեռնվել է արբանյակային տեղեկատվություն (վեգետացիոն ցուցիչի ընթացք, մշակաբույսերի սթրես, երաշտի ինդեքս) տեղեկագրի համար

Կատարվել են՝

- աշնանացան ցորենի վնասվածություն գնահատում ձմռան ցրտերից(%),
- աշնանացան ցորենի վեգետացիայի վերսկսման պահին հողի խոնավության պաշարների գնահատում ըստ գոտիների՝ փետրվարի 20-ի, մարտի 10-ի և 20-ի դրությամբ (0-20, 0-50 սմ շերտերում),
- դիտված անբարենպաստ ագրոօդերևութաբանական պայմանների հետևանքների վերաբերյալ տեղեկատվություն,
- կայաններից ստացվող ամենօրյա և տասնօրյակային տեղեկատվության վերծանում, մշակում, համեմատում բազմամյա միջին արժեքների հետ,
- օդի հարաբերական խոնավության տվյալների ամենօրյա սպասարկում,

- երաշտի տասնօրյակային հաշվարկներ մշակաբույսերի աճի և զարգացման վիճակը գնահատելու համար,
- ագրոօդերևութաբանական տվյալների շարունակական թվայնացման և արխիվացման աշխատանքներ,
- վերահսկվել է կայաններից ստացվող տեղեկատվությունը, թերությունները ճշտվել է հեռախոսակապով,
- ուսումնասիրվել է ավտոմատ կայաններից ստացվող տեղեկատվությունը համեմատելով փաստացի տվյալների հետ,

Կատարվել են ֆենոլոգիական կանխատեսումներ Արարատյան դաշտում՝
- ծիրանենու ծաղկման
- դեղձենու ծաղկման
- խաղողի վազի ծաղկման
- հաշվարկվել է լեռնային շրջաններում աշնանացան ցորենի մոմային հասունացման և հասկակալման ժամկետների վերաբերյալ,

Կատարվել են բերքատվության կանխատեսումներ՝
- հաշվարկվել է Արարատյան դաշտի ծիրանի և խաղողի միջին հանրապետական բերքատվության,
- հաշվարկվել է հացահատիկային մշակաբույսերի վեգետացիայի վերսկսման, ցողունակալման և հասկակալման փուլերի միջին հանրապետական բերքատվության,
- հաշվարկվել է բանջարանոցային մշակաբույսերի և կարտոֆիլի հանրապետական միջին բերքատվության,
- հաշվարկվել է խոտաբույսերի հանրապետական միջին բերքատվության,

Ագրոօդերևութաբանական կանխատեսումների արդարացման աստիճանը կազմել է.
- ծիրանենու ծաղկում՝ 100%
- դեղձենու ծաղկում՝ 100%
- խաղողի վազի ծաղկում՝100%

Ընդհանուր առմամբ, իրականացվել են ագրոօդերևութաբանական 13851 դիտարկումներ (նախատեսված դիտարկումների քանակ՝ 13851):

1.5. Հիդրոլոգիական դիտարկումներ և կանխատեսումներ

Իրականացվել են ռեժիմային հիդրոլոգիական ուսումնասիրություններ 7 գետավազանի (Դեբեդ, Աղստև, Ախուրյան, Մեծամոր-Քասախ, Սևան-Հրազդան, Արփա, Հարավային) հիդրոլոգիական կայանների 80 գետային, 2 ջրանցքի, 5 ջրամբարային և 4 լճային հիդրոլոգիական դիտակետերում: Սահմանված կարգով հիդրոլոգիական դիտակետերում իրականացվել են ջրի ելքի չափումներ, կատարվել են ջրի մակարդակի, ջրի և օդի ջերմաստիճանի, սառցային երևույթների դիտարկումներ:

Սևանա լճի 4 դիտակետերում կատարվել են ջրի մակարդակի, ջերմաստիճանի ամենօրյա 2 ժամկետային դիտարկումներ: Ստացված տեղեկատվությունն ամեն օր հաղորդվել է շահագրգիռ կազմակերպություններին:

Ամեն ամիս կազմվել է Սևանա լճի ջրային հաշվեկշիռը և տրամադրվել շահագրգիռ կազմակերպություններին, ինչպես նաև տվյալները հրապարակվել են «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում:

Ամեն օր 46 գետային, 5 ջրամբարային և 4 լճային հիդրոլոգիական դիտակետերից, ինչպես նաև Արփա-Սևան ջրատար-Ծովինար և Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցք-Գեղամավան դիտակետերից ստացվել է հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ տեղեկատվություն, որոնց հիման վրա կազմվել են ամենօրյա հիդրոլոգիական տեղեկագրեր և տրամադրվել շահագրգիռ կազմակերպություններին, ինչպես նաև տեղեկագրերը հրապարակվել են «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում:

22.02.2022 թվականին գետավազանային հիդրոլոգիական կայաններից ստացվել են 2021 թվականի դաշտային դիտարկման նյութերը:

Իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ստացված գրությունների հիման վրա պատրաստվել և տրամադրվել է անհրաժեշտ հիդրոլոգիական տեղեկատվություն:

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.28մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է 15 սմ-ով, իսկ 2022 թվականի հունվարի 1-ի մակարդակի համեմատ ցածր է 15սմ-ով:

Ջրամբարների ջրալցվածությունը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է. Արփիլիճ ջրամբար՝ 41.40 մլն մ^3 Ախուրյանի ջրամբար՝ 125.98 մլն մ^3, Ապարանի ջրամբար՝ 11.72 մլն մ^3, Մարմարիկի ջրամբար՝ 1.97 մլն մ^3, Ազատի ջրամբար՝ 16.33 մլն մ^3:

2022 թվականի մարտի 25-ին կազմվել և պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին է ներկայացվել «ՀՀ գետերի 2022 թվականի գարնանային վարարումների տարրերի կանխատեսում» տեղեկագիրը: Տեղեկագիրը հրապարակվել է նաև «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում:

Հաշվետու ժամանակահատվածում՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ, Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի ծավալը կազմել է 162.834 մլն.խոր.մ ջուր:

Հաշվետու ժամանակահատվածում՝ հունիսի 3-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ, ոռոգման նպատակով Սևանա լճից բաց թողնված ջրի ծավալը կազմել է 165.063 մլն.խոր.մ:

Ընդհանուր առմամբ, իրականացվել են հիդրոլոգիական դիտարկումներ 74766 հատ (նախատեսված դիտարկումների քանակ՝ 74766):

1.6. Ռադիացիոն մոնիթորինգ

Հիդրոօդերևութաբանական ցանցի 19 կայանում՝ ռադիոլոգիական իրավիճակի վերաբերյալ ամեն օր Գրինվիչի ժամանակով ժամը 06:00 (տեղական ժամանակով 10:00) իրականացվել են գամմա ֆոնի չափումներ:

Իրականացվել է շրջակա միջավայրի գամմա ճառագայթման դոզայի հզորության և աերոլոգիական կայանից բերված այրված թանզիֆի նմուշի ռադիոակտիվ փոշու մակերեսային խտության գումարային բետտա ակտիվության ամենօրյա չափումներ:

Կատարվել է օդերևութաբանական կայաններից բերված հողի նմուշների գումարային բետտա-ակտիվության չափումներ, ըստ անհրաժեշտության:

Կատարվել են ատոմակայանի շրջակայքից՝ Սևջուր Տարոնիկ հիդրոլոգիական դիտակետից, բերված ջրի նմուշներում կոշտ մնացորդների գումարային բետտա-ակտիվության չափումներ: Նորմայից գերազանցումներ չեն դիտվել:

ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի N 1098-Ն որոշմամբ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացվել է 38,360.0 հազար դրամ՝ «Ռազմական» դրությամբ պայմանավորված, ՀՀ ջրային անվտանգության ապահովման նպատակով Արփա և Որոտան գետերի ավազաններում նմուշառումների իրականացման հաճախականությունը ավելացնելու և ջրի աղտոտվածության մոնիթորինգի հուսալիությունը մեծացնելու համար: Այդ նպատակով հատկացված 38,360.0 հազ.դրամը նախատեսված էր համապատասխան սարքեր-սարքավորումների ձեռք բերման համար:Նշված սարքերի մատակարարումը իրականացվել է արտերկրից՝ մի մասը 1-ին եռամսյակում, իսկ մյուս մասը 2-րդ եռամսյակում:

Նոր ձեռք բերված սարքավորումները արդեն տեղադրվել են և դրվել են շահագործման մեջ: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ" ծրագրի Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում միջոցառման գծով 2022թ. համար, որպես արդյունքային ցուցանիշ նախատեսված, " Արփա և Որոտան գետերի, ինչպես նաև Սևանա լիճ թափվող հարավ-արևելյան ավազանի գետերի և սնող ջրաղբյուրների ջրհավաք ավազաններում ջրերի ռադիոակտիվ և քիմիական այլ նյութերով աղտոտվածության դիտարկումներ" -ը սկսվել են 2022թ. սեպտեմբերի 1-ից:

Հիդրոօդերևութաբանական ցանցի 19 կայանում ռադիոլոգիական իրավիճակի վերաբերյալ ամեն օր Գրինվիչի ժամանակով ժամը 06:00 (տեղական ժամանակով 10:00) իրականացվել են գամմա ֆոնի դոզայի հզորության չափումներ: Շաբաթը մեկ անգամ սահմանված կարգով տվյալները մշակվում և ուղարկվում են բաժին:

Աերոլոգիական կայանում իրականացվում է նոր ժամանակակից ռադիոմետրի (մակնիշ՝ PKC-AT1329) աշխատանքները, ջրի նմուշի ալֆա և բետա ռադիոակտիվության չափան համար:

Կատարված չափումների արդյունքներով Երևան քաղաքում և ՀԱԷԿ-ի 30-կմ գոտում գրանցված գամմա-ֆոնի արժեքները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում չեն գերազանցել թույլատրելի սահմանները: Հանրապետության տարածքից ընտրովի սկզբունքով վերցված հողի նմուշներում գումարային բետա-ակտիվությամբ աղտոտվածություն չի արձանագրվել:

Շրջակա միջավայրի գամմա ճառագայթման դոզայի հզորության ամենօրյա արդյունքները շաբաթվա վերջում վերահաշվարկվելուց հետո ՌՀՕԵ հեռագրի միջոցով, կոդավորված ձևով, ուղարկվել են Օբնինսկ, իսկ միջինացված տվյալները՝ ԱԻՆ փրկարար ծառայություն:

Ընդհանուր առմամբ, իրականացվել է բետա-ակտիվությամբ աղտոտվածության չափումներ /ռադիացիոն մոնիթորինգ / 14258 հատ (նախատեսված դիտարկումների քանակ՝ 19454):

1.7. Ռադիոլոկացիոն դիտարկումների իրականացում, մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքներ.

Մարզային հակակարկտային կենտրոնների պետերի և համապատասխան մարմինների կողմից մարզպետարաններում և համայնքապետարաններում կազմակերպվել են հանդիպումներ՝ կոորդինացվել են կայանքների համատեղ շահագործման աշխատանքները, կազմվել հեղուկ գազի գնման և վճարման ժամանակացույցեր: Նախապատրաստվել են համայնքապետարանների և «Բութան» ՍՊԸ-ի հետ պայմանագրերի կնքման աշխատանքներ:

Վավերացվել են հակակարկտային կայանքների համատեղ շահագործման և սպասարկման պայմանագրերը՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի և ըստ պատկանելիության համապատասխան համայնքների և սեփականատերերի հետ:

Մաքրվել, ստուգվել և վերանորոգվել են՝ կոնսերվացված գազագեներատորային հակակարկտային կայանքներից ապամոնտաժված հանգույցները, կենտրոններում տեղադրված հեռակառավարման համակարգերը, ալեհավաքները, համակարգչային տեխնիկան, այլ սարքերն ու սարքավորումները:

Իրականացվել են հակակարկտային կայանքերի գազագլանանոթների տեղափոխման, տեխզննման, վերանորոգման, դրոշմակնքման, լիցքավորման և վերաբաշխման աշխատանքներ:

Գարնանը ապակոնսերվացվել են «ՀՄԿ» ՊՈԱԿ-ին պատկանող թվով 234 հակակարկտային կայանքները, երկու ՄՌԼ-5 ռադիոլոկացիոն կայանները, ավտոնոմ սնուցման գեներատորները և այլ սարքավորումները:

Հաշվետու ժամանակահատվածում համատեղ շահագործման է ընդունվել 16 նոր համայքային հակակարկտային գազագեներատորային կայանքներ:

Գազագեներատորային հակակարկտային կայանքների թիվը դարձել է 628:

ԱԻՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն ՊՈԱԿ–ի հետ համատեղ իրականացվել են «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի թվով 152 գազագեներատորային հակակարկտային կայանքների տեխնիկական անվտանգության փորձաքննությանն ուղղված աշխատանքներ, որի արդյունքում տրվել են դրական եզրակացություններ:

2022 թվականի հոկտեմբերի 17-ից նոյեմբերի 24-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է հակակարկտային գազագեներատորային կայանքների կոնսերվացման աշխատանքները, արդյունքում կոնսերվացվել է «ՀՄԿ» ՊՈԱԿ-ին պատկանող 234 հակակարկտային գազագեներատորային կայանքները: Միաժամանակ աջակցություն է ցուցաբերվել համայնքներին իրենց պատկանող կայանքների կոնսերվացման աշխատանքներում:

Ակտիվ ներգործության են ենթարկվել 410 կարկտավտանգավոր ամպ, կատարվել է 1215951 կրակոց:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

2.1. ՀՀ Մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգի իրականացում

2022թ. ընթացքում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգը (ջրի նմուշառում, դաշտային հետազոտություններ, ֆիզիկաքիմիական և հիդրոկենսաբանական անալիզներ, որակի գնահատում) իրականացվել է հանրապետության ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ) 141 դիտակետում: Ջրի նմուշներում դիտարկվել են ջրի որակի բնութագրական 40-50 ֆիզիկաքիմիական ցուցանիշ՝ հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ և հիդրոկենսաբանական ցուցանիշներ:
Ընդհանուր առմամբ որոշվել է 43420 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների նվազագույն քանակ՝ 43420):

2.2. ՀՀ Բնակավայրերի օդային ավազանի որակի մոնիթորինգի իրականացում

2022թ. ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության 10 բնակավայրում օդի նմուշառման երեք եղանակով՝ պասիվ, ակտիվ և ավտոմատ: Մթնոլորտային օդում ուսումնասիրվել են ազոտի և ծծմբի երկօքսիդների, փոշու, փոշում պարունակող մետաղների ու գետնամերձ օզոնի պարունակությունները:
Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ և Ծաղկաձոր քաղաքներում մթնոլորտային օդի որակի դիտարկումներն իրականացվել են 15 ստացիոնար դիտակայանում՝ ակտիվ նմուշառման եղանակով: Պասիվ եղանակով նմուշառումներ իրականացվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան և Ծաղկաձոր քաղաքների 214 դիտակետում:

2022թ ընթացքում ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի միջոցառումների շրջանակում որոշվել է 75300 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների քանակ՝ 75300):

2.3. Հողերի աղտոտվածության մոնիթորինգի իրականացում

2022թ. հողերի աղտոտվածության մոնիթորինգի միջոցառումների շրջանակում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ընդերքօգտագործման հետևանքով հողերի աղտոտվածության աստիճանի գնահատում՝ հողերի նմուշառում, նմուշառված հողերի լաբորատոր հետազոտություններ, տեղանքի օդալուսանկարահանում, քարտեզագրական աշխատանքներ,
- անտառային և բնական լանդշաֆտների հողերի աղտոտվածության աստիճանի գնահատում՝ դաշտային հետազոտական աշխատանքներ, հողերի նմուշառում, նմուշառված հողերի լաբորատոր հետազոտություններ,
- բնակավայրերում հողերի աղտոտվածության աստիճանի գնահատումման դաշտային հետազոտական աշխատանքներ,

• գյուղատնտեսական նշանակության հողերի աղտոտվածության աստիճանի գնահատում՝ դաշտային հետազոտական աշխատանքներ, հողերի նմուշառում, նմուշառված հողերի լաբորատոր հետազոտություններ,

2022թ. ընթացքում հողերի աղտոտվածության մոնիթորինգի միջոցառումների շրջանակում որոշվել է 10000 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների քանակ 10000):

2.4. Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ (EMEP) ծրագրի շրջանակներում Հայաստանում օդի անդրսահմանային աղտոտման մոնիթորինգի իրականացում

2022թ. ընթացքում մթնոլորտային օդի անդրսահմանային աղտոտվածության մոնիթորինգի Ամբերդի դիտակայանում իրականացվել է մթնոլորտային օդի և մթնոլորտային տեղումների մոնիթորինգ և որոշվել 10395 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների նվազագույն քանակ՝ 10395):

2.5. Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգի իրականացում

«Արաքս գետի ջրի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգի ծրագրի» շրջանակում Արաքս գետի հայ-իրանական սահմանային հատվածում 2022թ. ընթացքում իրականացվել է ջրի և հատակային նստվածքների մոնիթորինգ, որոշվել 2040 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների նվազագույն քանակ՝ 2040):

2.6. Շրջակա միջավայրի նախարարության կայքի սպասարկում, ՀՄԿ ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի սպասարկում, բնապահպանական տեղեկատվության հավաքագրում, մշակում, վերլուծում, բազաների սպասարկում, օդի պահանջվող օգտագործում (ՕՊՕ) համակարգի սպասարկում, Էկոպորտալում ինդիկատորների գնահատում, մշակում, թարմացում, պորտալի սպասարկում

2022թ. ընթացքում ապահովվել է շրջակա միջավայրի նախարարության կայքի (http://env.am/) անխափան աշխատանքը: Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում 2022թ. իննամսյակում տեղադրվել են լուրեր, հայտարարություններ, տեսահոլովակներ, բնապահպանական փորձաքննության նախագծեր, փորձաքննության եզրակացություններ, ՍԹԱ նախագծեր, ծառայողական քննության հրամաններ, մոնիթորինգի եռամսյակային և տարեկան տեղեկագրեր, եղանակային կանխատեսումներ ամենօրյա (աշխատանքային օրեր) ռեժիմով, գետերի, լճերի և ջրամբարների վիճակի, Սևանա լճի վերաբերյալ տեղեկանքներ, նախարարության և համակարգի կառույցների աշխատակազմերի փոփոխություններն ըստ ստացված հրամանների, նախարարության թափուր հաստիքների պարբերական թարմացումներ, բնապահպանական ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի ցանկերի թարմացումներ «Օրենսդրություն» բաժնի համապատասխան ենթամենյուներում: Բացվել են նոր բաժիններ, տեղադրվել համապատասխան տեղեկատվությունը, կատարվել են եռալեզու թարգմանություններ: Ամբողջապես վերլուծվել և թարմացվել են Արտանետումներ և Ջրային ռեսուրսներ բաժինները:

ՇՄՆ կայքի համապատասխան էջերի թարմացումները և նյութերի եռալեզու թարգմանությունները կատարվել են ՀՀ Բնապահպանության նախարարի 02.10.2017թ. թիվ 338-Ա հրամանով հաստատված կարգի համաձայն:

Սպասարկվել է «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի http://meteomonitoring.am/ կայքը, կայքում ավելացվել են մի շարք էջեր, բաժիններ, ենթաբաժիններ: Ամենօրյա ռեժիմով կայքում տեղադրվել են եղանակային կանխատեսումներ, գետերի ելքերի վերաբերյալ տեղեկատվություն: Ջրամբարների լցվածության, Սևանա լճի մակարդակի, ջրի որակի, մթնոլորտային օդի որակի վերաբերյալ տեղեկատվությունները հրապարակվել են կայքի համապատասխան բաժիններում: Բարելավվել են կայքի մի շարք էջեր, կատարվել է դիզայնի փոփոխություն: Իրականացվել է կայքում տեղադրված նյութերի և մենյուների եռալեզու թարգմանություն:

Սպասարկվել են «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերը, պարբերաբար ավելացվում է էջում հրապարակվող նյութերի քանակը և որակը: Ավելացել է հետևորդների թիվը սոցիալական ցանցերում:

Սպասարկվել է Հայաստանի էկոպորտալի կայքը՝ ecoportal.am: Հունիսի վերջին պորտալի վրա հաքերային հարձակումից հետո, իրականացված համապատասխան տեխնիկական միջոցառումների շնորհիվ պորտալի աշխատանքը վերականգնվել է: Պորտալում հնարավոր չի եղել պահպանել վերջին 2 տարիների տեղեկատվությունը, ինչի արդյունքում ներկայումս էլ շարունակվում են թարմացման աշխատանքներ: Արդեն իսկ թարմացվել են C2, C3, C4, C5 ինդիկատորներն ամբողջությամբ՝ հայերեն և անգլերեն տարբերակները, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՔԱՐՏԵԶՆԵՐ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐ մենյուները, Ջրային ռեսուրսներ բաժինը: Պորտալում շարունակում են իրականացվել բազաների վերականգնման աշխատանքներ: Մուտքային ձևաչափեր են պատրաստվել C10, C11 ինդիկատորների տվյալները պորտալ ներմուծելու և գրաֆիկական պատկերներ ձևավորելու համար: Շարունակաբար իրականացվում են տեխնիկական անճշտությունների բացահայտման և շտկման աշխատանքներեր:

Իրականացվել է «Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին» Ձև N2-տա (օդ) (տարեկան), «Ջրօգտագործման մասին» Ձև N2-տա (ջրտնտ) (տարեկան), «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» Ձև N 1-թափոն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվությունների 2021 թվականի տվյալների մուտքագրման համար բազաների նախապատրաստում: Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչության համակարգիչների վրա տեղադրվել է «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» Ձև N1-թափոն ծրագիրը և բազան, կատարվել են համապատասխան կարգավորումները: Մթնոլորտային քաղաքականության վարչության համապատասխան համակարգչի վրա տեղադրվել է «Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի մասին» Ձև N2-տա (օդ) բազան, կատարվել համապատասխան կարգավորումները և հաշվարկները: Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչությունում կատարվել է «Թափոն» համակարգի տեղադրում սերվերային տարբերակով համակարգիչների վրա: Իրականացվել են 2021 թվականի տվյալների վերլուծություններ:

Իրականացվել է մակերևութային և ստորերկրյա ջրերի, մթնոլորտային օդի մոնիթորինգի տվյալների ամփոփում, գնահատում և վերլուծություն, բազաների թարմացում, տվյալների սահմանված կարգով տրամադրում և հրապարակում: Շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքներն ամփոփվել են եռամսյակային տեղեկագրերի տեսքով, մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակը նաև բաշխման շաբաթական, ամսական ու եռամսյակային քարտեզների, իսկ մակերևութային ջրերի որակը՝ ամսական և եռամսյակային քարտեզների տեսքով:

2.7. «Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի» (Օրհուս կենտրոնի) սպասարկում

2022թ. ընթացքում Բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի (Երևանի Օրհուս կենտրոն) կողմից, հիմք ընդունելով Օրհուսի կոնվենցիայի դրույթները, իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- սեմինարների, բաց դասերի, քննարկումների կազմակերպում, աջակցություն հասարակական լսումների կազմակերպմանը և Օրհուսի կոնվենցիայի 2022թ. Ազգային զեկույցի պատրաստման, Օրհուսի կոնվենցիայի Կողմերի 7-րդ նստաշրջանում Հայաստանի վերաբերյալ կայացրած VII/8a որոշման կատարման վերաբերյալ գործողությունների պլանի մշակման գործընթացներին
- հասարակությանը տեղեկատվության տրամադրում, լուսաբանում և տարածում,
- գրադարանի և ֆիլմադարանի այցելուների սպասարկում, համագործակցություն բնապահպանական ոլորտի ՀԿ-ների և այլ կազմակերպությունների հետ,
- շրջակա միջավայրի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ անձանց շրջանում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի տարածում:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում նախարարությանը,
- մասնակցություն «Կանաչ քաղաքներ» ծրագրին, Ռուսաստանի Պերմ և Նիժնի Նովգորոդ քաղաքների կանաչ տարածքների կառավարման դրական փորձի ուսումնասիրություն,
- մասնակցություն «EU4Dialogue էներգետիկ անցում» ծրագրին,
- մասնակցություն Օրհուսի կոնվենցիայի իրականացմանն առնչվող ազգային և միջազգային գործընթացներին:

Սեմինարների, քննարկումների որոշ մասը կազմակերպվել են օնլայն հարթակներում:

2.8. Ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի իրականացում

2022թ. ընթացքում ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգն իրականացվել է 6 ՋԿՏ-ում ընդգրկված 119 ստորերկրյա ջրաղբյուրներում: Ընդհանուր առմամբ որոշվել է 18839 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների թիվ՝ 18839), այդ թվում.

- ստորերկրյա ջրերի 70 դիտակետում (դրական և բացասական մակարդակով հորատանցքերում) 5040 մակարդակի (ճնշման) չափում՝ 6 անգամ հաճախականությամբ (նախատեսված չափումների թիվ՝ 5040): Չափումները կատարվել են Արարատյան, Գյումրիի և Սևանի միջլեռնային գոգավորությունների հորատանցքերում և ջրհորներում:
- ստորերկրյա ջրերի 71 դիտակետում՝ 47 բնաղբյուրում և միջլեռնային գոգավորությունների 23 շատրվանող հորատանցքում ծախսի 5112 չափում (նախատեսված չափումների թիվ՝ 5112),
- ստորերկրյա ջրերի 119 դիտակետում ջերմաստիճանի 8568 չափում (նախատեսված չափումների թիվ՝ 8568),
- ստորերկրյա ջրերի 55 դիտակետերից կատարվել է նմուշառում լաբորատոր հետազոտությունների համար (նախատեսված նմուշառումների թիվը՝ 55),
- ստորերկրյա ջրերի 119 դիտակետի շրջակայքում՝ հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք ուղղություններով կատարվել է տեղազննում (նախատեսված ցուցանիշների թիվ՝ 119): Արդյունքում չեն բացահայտվել ստորերկրյա ջրերի որակի և քանակի վրա ազդող նոր տեխնածին գործոններ կամ հնարավոր աղտոտման օջախներ:

Կատարվել է ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի մոնիթորինգ, ընդհանուր առմամբ որոշվել է 4400 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների թիվը՝ 4400):

2.9. *Թափոնների հաշվառում, դասակարգում և վերլուծություն*

Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքներին աջակցության շրջանակներում, թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների ռեեստրների ստեղծմանն աջակցության նպատակով հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են թափոնների **գոյացման, վերամշակման ու օգտահանման 20 օբյեկտներ այդ թվում 17 թափոններ գոյացնող օբյեկտներ և 3 թափոններ վերամշակող և/կամ օգտահանող օբյեկտներ (նախատեսված ցուցանիշների քանակ՝ 20): Մասնավորապես հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են** հետևյալ օբյեկտները՝ «ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ, Արարատի ոսկու կորզման ֆաբրիկա; «Արարատցեմենտ» ՓԲԸ, «Արարատի գինու գործարան» ՍՊԸ, «ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ, «Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ, «Թեղուտ» ՓԲԸ Լեռնահարստացման կոմբինատ, «ԱՄ-ԷՍԿԱ» ՍՊԸ, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, «Էլբատ» ՓԲԸ, «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲԸ, «Եվրոթերմ» ՓԲԸ, «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ, «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ, Երեւանի «Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ, <<ՏԵԼԻԱ-ՄԵԴ>> ՓԲԸ, <<Ծաղկահովիտի Բժշկական Կենտրոն>> ՓԲԸ, <<ՀԱՅ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՏՆԱՇԻՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ>>ՍՊԸ, <<ԱԽՈՒՐՅԱՆԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ>> ՍՊԸ, «ԱՅ.ՍԻ.ԶԵԹ» ՍՊԸ, «Սլավմեդ Բժշկական Կենտրոն» ՍՊԸ: Օբյեկտների ընտրության չափորոշիչներն են՝ օբյեկտը գոյացնում է թափոններ կամ օբյեկտը վերամշակում/օգտահանում է թափոններ կամ վերոնշյալ երկու չափորոշիչների համակցությունը: Ուսումնասիրության ընթացքում հավաքվել է հետևյալ տեղեկատվությունը՝ թափոնագոյացնող պրոցեսները, թափոնների անվանացանկը, գոյացման ծավալները, որակական և քանակական

բնութագրերը, տեղեկություններ՝ թափոնների գործածության և դրանց գոյացման ծավալների ու վտանգավորության աստիճանի նվազեցման վերաբերյալ: Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքներին աջակցության շրջանակներում, թափոնների և դրանց օգտագործման ու վնասազերծման տեխնոլոգիաների վերաբերյալ տվյալների բանկը համալրելու նպատակով, հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են թափոնների օգտահանման, վնասազերծման **15** տեխնոլոգիա և երկրորդային հումքի վերամշակման **10** մեթոդ (նախատեսված ցուցանիշների քանակ՝ **25**):

Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման աշխատանքների աջակցության շրջանակներում, թափոնների հեռացման վայրերի ռեեստրների ստեղծմանն աջակցության նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ուսումնասիրություն թափոնների հեռացման **11** վայրերում **(նախատեսված ցուցանիշների քանակ՝ 11)**: Մասնավորապես ուսումնասիրվել են Կոտայքի մարզի՝ ***Բյուրեղավանի, Եղվարդի, Աբովյանի, Քասախի, Ջրվեժի, Գառնու,*** Լոռու մարզի՝ **Ալավերդու, Սպիտակի**, և Արմավիրի մարզի՝ ***Մեծամորի, Էջմիածնի, Արմավիրի*** *բնակավայրերի* գործող աղբավայրերը: Աղբավայրի ուսումնասիրության ժամանակ հետազոտվում են մի շարք գործոններ, որոնք հնարավորություն կտան պատկերացում կազմել ոչ միայն տվյալ աղբավայրում տեղադրվող թափոնների ծավալի և տեսակի մասին, այլև դրանց տեղափոխման և տեղադրման պայմանների ինչպես նաև դրանցից բխող ռիսկերի մասին: Վերոնշյալ տեղեկատվությունը կարող է ստեղծել հենք որոշում կայացնողների համար կանխարգելելու՝ կամ նվազագույնի հասցնելու վերոնշյալ թափոնների վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա: Ուսումնասիրման ժամանակ հավաքվում են այնպիսի տվյալներ ինչպիսիք են՝ աղբավայր տեղադրվող թափոնների քանակը, այն համայնքների ցանկը որոնցից գոյացող թափոնները տեղադրվում են տվյալ աղբավայրում, բաց այրման օջախների կամ հետքերի առկայությունը, բաց այրման հաճախականությունը, ուսումնասիրվող աղբավայրի կարգավիճակը, աշխարագրական դիրքը, աղբավայրի մակերեսը, ցանկապատի, պահակատան, ջրամատակարարման և հոսանքի առկայությունը, տվյալ աղբավայրում թափոններ տեղադրող օպերատորի մասին տեղեկատվություն, ինչպես նաև այն բնակչության թվի մասին, որը գոյացնում է աղբավայր տեղափոխվող թափոնները:

«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարմանն աջակցելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նմուշառման ենթակա աղբավայրի ընտրություն: Աղբավայրի ընտրության հիմնական չափորոշիչը բաց այրման առկայությունն է, որը հանդիսանում է ոչ միտումնավոր արտադրված Կայուն Օրգանական Աղտոտիչների (UPOPS)՝ մասնավորապես պոլիքլորացված դիբենզոդիօքսինների և դիբենզոֆուրանների խոշոր աղբյուր: Աղբավայրի ընտրության ժամանակ հաշվի են առնվում նաև այնպիսի չափանիշներ ինչպիսիք են՝ աղբավայրի աշխարհագրական դիրքը, քամիների վարդը, աղբավայրի հեռավորությունը բնակավայրերից, արոտավայրերից, մակերևույթային և ստորերկրյա ջրերից, ինչպես նաև առողջարաններից և բնության հատուկ պահպանվող տարածքներից: Այս տարվա ուսումնասիրությունների համար ընտրվել էր «Աբովյանի աղբավայրը»: Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարմանն աջակցելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է

նաև, ընտրված աղբավայրի նմուշառում: Մասնավորապես՝ աղբավայրից և նրան հարող տարածքից վերցվել է 26 միջինացված ներկայացուցչական հողի նմուշ: Վերցված նմուշները 2022թ. սեպտեմբեր ամսին հանձնվել են ՊՈԱԿ-ի կենտրոնական լաբորատորիա՝ դրանցում ԿՕԱ-ների մնացորդային քանակությունների որոշման համար: Ավարտվել են վտանգավոր թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջների ուսումնասիրման աշխատանքները (100%) մասնավորապես՝ «Պոլիքլորացված բիֆենիլներ (PCBs), պոլիքլորացված տերֆենիլներ (PCTs), պոլիքլորացված նաֆթալիններ (PCNs) կամ պոլիբրոմացված բիֆենիլներ (PBBs) ներառյալ հեքսաբրոմոբիֆենիլ պարունակող, կամ դրանցով աղտոտված, թափոնների էկոլոգիապես համահունչ կառավարման» տեխնիկական ուղեցույցի մշակումը:

Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման միջոցառումներին ի աջակցություն, կատարվել է ՀՀ տարածքում 2021 թվականին առաջացած թափոնների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրում և վերլուծություն: 2021 թվականին հաշվետվություն ներկայացրած ձեռնարկությունների թիվը կազմում է 1217 ձեռնարկություն:

3. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

2022 թվականի ընթացքում Անտառների և կենսաբազմազանության մոնիթորինգի ծառայության կողմից իրականացվել են անտառներում դիտարկումներ և ուսումնասիրություններ 45 հատ (նախատեսված ցուցանիշների քանակ՝ 45): անտառպահպանության, մթերված և իրացված թափուկ վառելափայտի, հրդեհված տարածքների և անտառխախտման արձանագրությունների, անտառապատման աշխատանքների պահպանության ուսումնասիրություններ են իրականացվել թվով 5 ԲՀՊՏ-ների և Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 15 անտառտնտեսության մասնաճյուղերի սահմաններում: Աշխատանքների արդյունքում ուսումնասիրվել են «Զանգեզուր կենսոլորտային համալիր» և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» «Սևան ազգային պարկ», «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ների և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Տաշիրի, Ճամբարակի, Հրազդանի, Վանաձորի, Թումանյանի, Սևքարի, Արծվաբերդի, Ստեփանավանի, Իջևանի, Նոյեմբերյանի, Ջիլիզայի, Արագածոտնի, Գորիսի, Սիսիանի և Կապանի անտառտնտեսություն մասնաճյուղերի աշխատակիցների կողմից կազմված անտառխախտման արձանագրությունները, պահպանության աշխատանքների կազմակերպվածությունը, ուշադրություն է դարձվել անտառային հրդեհներին և հակահրդեհային անվտանգության պարտադիր միջոցառումների իրականացմանը և առկա մի շարք այլ հույժ կարևոր հիմնախնդիրներին:

Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է 53 ապօրինի հատման օջախներ, որոնցում հատված ծառերի քանակը հասնում է հարյուրապատիկների:

Ուսումնասիրվել է 2019-2021 թթ.-երին իրականացված անտառվերականգնման աշխատանքների ընթացիկ վիճակը, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 403,7հա:

Հաշվարկվել է ծառերի կպչողականությունը, որոշ դեպքերում իրականացվել է մակերեսային հաշվարկներ և քարտեզ-սխեմաների կազմում:

Իրականացրել է նաև փայտանյութի սպառման շուկայի ուսումնասիրություններ, որոնք համեմատվել են նախորդ տարվա տվյալների հետ:

Ուսումնասիրվել է 52 հատատեղ, որից 40-ը սանիտարական, 8-ը անցումային 1-ը՝ նոսրացման, 3-ը՝ այլ հատում: Բացահայտվել են հատատեղերում առկա մի շարք թերություններ, ինչպիսիք են՝ հատման տեսակին ոչ համապատասխան ծառերի ընտրություն, համարակալումների անընթեռնելիություն, անտառահատման տոմսում նշված վայրի և հատատեղի իրական վայրի անհամապատասխանություն:

Իրականացվել է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման միջոցառումների դիտարկում (մաքրված տարածքի մակերեսային հաշվարկ), ինչպես նաև ուսումնասիրվել է ջրածածկ և ջրածածկման ենթակա համապատասխան տարածքների հատման ենթակա ծառերի անձնագրերը և համեմատվել դաշտում առկա տվյալների հետ:

ԱՏՀ և ՀՋ տեխնոլոգիաների կիրառմամբ, օգտագործելով Սենտինել 2 արբանյակի ձմեռային ժամանակահատվածի պատկերները ուսումնասիրվել են ՀՀ անտառներում առկա ասեղնատերև մոնոկուլտուրաների մակերեսները: Դրանք համեմատվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսության մասնաճյուղերի նախկին կառավարման պլաններում առկա տվյալների, ինչպես նաև թվային քարտեզագրական շերտերում առկա տվյալների հետ: Վեր են հանվել մի շարք անհամապատասխանություններ:

Կատարվել է «Խոր Վիրապ» պետական արգելավայրում բռնկված հրդեհի վերլուծություն: Վերլուծությունը կատարվել է ԱԹՍ – ով կատարված օրթոֆոտոնկարի հիման վրա: Sentinel 2 արբանյակից ստացված պատկերների մշակման արդյունքում վերծանվել է Խուստուփ լեռան հարակից տարածքում (Խուստուփից 5 կմ հրվ-արլ, հարավահայաց դիրքադրության լանջին) և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Իջևանի անտառտնտեսություն մասնաճյուղում բռնկված հրդեհները:

Հեռազննման տեխնոլոգիաների կիրառմամբ ուսումնասիրվել է 18.09.2022 թվականի Սենտինել-2 արբանյակից ստացված պատկերը, որի արդյունքում հաշվարկվել է Վայոց ձորի մարզում Ադրբեջանի հարձակման հետևանքով հրդեհված տարածքների մակերեսը:

Քարտեզագրվել են անտառային տարածքներում տեղի ունեցած մի շարք այլ հրդեհներ:

Արբանյակային պատկերների վերծանման արդյունքում հաշվարկվել է Արծվանիկի և Գեղանուշի պոչամբարների մակերեսները 2022 թվականի հունիսի դրությամբ: Արդյունքում պարզվել է, որ Գեղանուշի պոչամբարի հայելու մակերեսը էական փոփոխությունների չի ենթարկվել համեմատած 2021 թվականի հետ, իսկ Արծվանիկի պոչամբարի մակերեսը ավելացել է 14.75հա-ով:

Ընդհանուր առմամբ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում իրականացվելիք միջոցառումները իրականացվել են ըստ պայմանագրի սահմանված չափով և որակով: 2022թ. ընթացքում.

- կատարվել է դիտարկումների ամփոփում, կազմվել են թվով 22 ամփոփագրեր:

- Հաշվետու ժամանակաշրջանում օդերևութաբանական և հելիոերկրաֆիզիկական դիտարկումների մասով կա շեղում, որը պայմանավորված է եղանակային պայմաններով, ինչի արդյունքում 2 օդերևութաբանական կայանների աշխատանքներ ժամանակավորապես դադարեցվել են և ձևակերպվել է աշխատողների հարկադիր պարապուրդ:
- Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող, ջուր) կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակները որոշվել են, համաձայն Ստոկհոլմի Կոնվենցիայի, 100 տոկոսով,
- ցուցանիշների համապատասխանության տեսակարար կշիռը (արդյունավետությունը) ծրագրով հաստատված մոնիթորինգային ցուցանիշներին կազմում է 100 տոկոս ,
- Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության ստանդարտներին համապատասխանության աստիճանը,կանխատեսումների արդարացվածության տոկոսը կազմում է 85 տոկոս,
- վտանգավոր թափոնների անվտանգ գործածությանը ներկայացվող պահանջների ուսումնասիրությունը հաշվետու ժամանակաշրջանի համար սահմանվածի չափով՝ 100 տոկոս,
- անտառտնտեսությունների և բնության հատուկ պահպանվող տարածքների ընդգրկվածության աստիճանը կազմում է հաշվետու ժամանակաշրջանի համար սահմանվածի չափով՝ 80 տոկոս:

«Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի Կենտրոն»
ՊՈԱԿ –ի տնօրեն Լ.Ազիզյան

Կ.Տ.

"18" " հունվարի" 2023թ"

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում» ծրագրային միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների հաշվետվության վերաբերյալ

1) անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունները՝
   - ՀՀ անտառածածկի և սաղարթի փոփոխությունների վերաբերյալ տարածական քարտեզներ (GIS shape files) և մակերեսների (հա) տվյալներ, ըստ տարիների՝ ստեղծված արբանյակային տվյալների վերծանման և արխիվացման արդյունքների, ինչպես նաև դաշտային ուսումնասիրությունների հիման վրա,

     Տեղեկատվությունը կցվում է /հավելված 1/
   - տարեկան բնափայտի իրական ծավալների (խմ) վերհանման վերաբերյալ ուսումնասիրությունների տվյալներ.

     Տեղեկատվությունը կցվում է /հավելված 2/:
2) Հավելված 3-ում և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ» ծրագրի Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող և ջուր) կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակների մոնիթորինգի իրականացում, ցուցանիշ» տողի թվային ցուցանիշին.

   Պարզաբանում

   Հավելված 3-ում կատարվել է փոփոխություն և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ» ծրագրի Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունն ամբողջությամբ համապատասխանեցվել է «Շրջակա միջավայրի օբյեկտներում (հող և ջուր) կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակների մոնիթորինգի իրականացում, ցուցանիշ» տողի թվային ցուցանիշին:

3) Հաշվետվության 1.5 կետում նշված է, որ «Ամեն ամիս կազմվել է Սևանա լճի ջրային հաշվեկշիռը և տրամադրվել շահագրգիռ կազմակերպություններին», սակայն ջրային պետական կադաստրում գրանցելու նպատակով այն չի ներկայացվել ջրային ռեսուրսների կառավարման վարչությանը.

   Պարզաբանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի 68-Ն որոշման հավելվածի III կետով սահմանված են «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Շրջակա

միջավայրի նախարարությանը տրամադրվող տեղեկատվության բովանդակությունն և տրամադրման ժամկետները, հավելվածում սահմանաված չէ Սևանա լճի ամսական և տարեկան ջրային հաշվեշռի տրամադրման կարգը և ժամկետները: Միաժամանակ պետք է նշել, որ մակերևութային ջրային ռեսուրսների քանակական ցուցանիշների վերաբերյալ՝ տարեկան պարբերականությամբ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 15-ը ներկայացվում է «ՀՀ մակերևութային ջրային ռեսուրսների ամենամյա տվյալներ» տարեգիրը (վերջինը ներկայացվել է Ն/18.1/5136-2022 գրությամբ), որի աղյուսակ 2"13-ը Սևանա լճի ջրային հաշվեկշիռն է:

4) ներկայացնել պարզաբանում հաշվետվության 1.5 կետում նշված է 2022 թվականի դեկտեմբերի 27-ի դրությամբ ջրամբարների լցվածության ցուցանիշների վերաբերյալ. մասնավորապես, նշված է՝ Արփի լիճ՝ 41.4 մլն. մ^3, Ախուրյանի ջրամբար՝ 123 մլն. մ^3, Ապարանի ջրամբար՝ 11.7 մլն. մ^3, Ազատի ջրամբար 15.6 մլն. մ^3, սակայն ջրային պետական կադաստրում, համաձայն «Ջրառ» ՓԲԸ-ի ներկայացված ամենօրյա տեղեկատվության, 2022 թվականի դեկտեմբերի 27-ի դրությամբ ջրամբարների լցվածությունը կազմել է՝ Արփի լիճ՝ 41.2 մլն. մ^3, Ախուրյանի ջրամբար՝ 122,56 մլն. մ^3, Ապարանի ջրամբար՝ 11,66 մլն. մ^3, Ազատի ջրամբար 15.53 մլն. մ^3.

Պարզաբանում

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ 5 ջրամբարներում ջրալցվածության վերաբերյալ տվյալները շահառուներին տրամադրվում ըստ հիդրոլոգիական դիտակետերի տվյալների և ՊՈԱԿ-ը իրավասու չէ մեկնաբանել այլ կազմակերպությունների կողմից նույն բնութագրիչի վերաբերյալ ներկայացվող տվյալները:

5) հաշվի առնելով, որ տարին ամփոփվել է՝ առաջարկում եմ տվյալները ներկայացնել 2022 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ.

Պարզաբանում

Կատարվել է փոփոխություն,հաշվետվության մեջ ներառված բոլոր տվյալները ներկայացվել են 31.12.2022թ. դրությամբ, քանի որ համակարգի դիտարկումների ցանցը շուրջօրյա ռեժիմով է աշխատում և դիտարկումների շարքը չի ընդհատվում:

6) Որպես օդերևութաբանական և հելիոերկրաֆիզիկական դիտարկումների թերակատարում, ինչպես նախորդ հաշվետվություններում, այնպես էլ 4-րդ եռամսյակի համար, նշված է «նոր աշխատակիցների համալրման անհնարինությունը»: Անհրաժեշտ է պարզաբանել՝ ինչո՞վ է պայմանավորված պարբերաբար ներկայացվող խնդիրը, արդյո՞ք դիտարկումների թերակատարումը բացասական հետևանքներ կարող է ունենալ՝ անհրաժեշտության դեպքում ցուցանիշների փոփոխության կամ աշխատակիցների ներգրավման սկզբունքի վերանայման հարցերը քննարկելու նպատակով:

Պարզաբանում

Պայմանավորված եղանակային պայմաններով, երբ անհնարին է դառնում տեղաշարժվելը, կայանից մոտակա բնակավայրեր սնունդ և կենցաղային այլ իրեր հայթայթելու համար, բարձրլեռնային դժվարամատչելի կայանների աշխատանքը անհնարին է դառնում և ստիպված ձևակերպվում է հարկադիր պարապուրդ աշխատողների համար և մինչև ճանապարհների բացվելը, դադարեցվում են այդ պայմաններում հայտնված դժվարամատչելի օդերևութաբանական կայանների աշխատանքը: Այդ հանգամանքով է պայմանավորված, հաշվետու ժամանակահատվածում, Վարդենյաց լեռնանցքի դժվարամատչելի օդերևութաբանական կայանի աշխատանքի ժամանակավոր դադարեցումը, որն էլ բերել է ցուցանիշների թերակատարման:

Մինչև ԽՍՀՄ փլուզումը նմանատիպ կայանների համար գործում էին նորմեր,որոնք կարգավորում էին բնակավայրերից հեռու գտնվող կայանների աշխատանքային պայմանները:Այսպես, օրինակ համակարգում գործող 6 բարձր լեռնային դժվարամատչելի կայանների աշխատողներին հատկացվում էր անվճար սնունդ՝ աշխատանքային օրենսդրության, ԽՍՀՄ Աշխատանքի Պետական Կոմիտեի և ՀամԿԽ-ի համատեղ որոշման պահանջներից ելնելով, որը տրվում էր բնամթերքի ձևով: ԽՍՀՄ փլուզումից հետո, ՀՀ ֆինանսների, ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունների կողմից թույլատրվեց դժվարամատչելի բարձրլեռնային կայանների աշխատակիցների հասանելիք անվճար սննդամթերքի արժեքը հաստատված նորմաների սահմաններում վճարել գումարային տեսքով ելնելով հանրապետությունում գործող նվազագույն աշխատավարձի չափից: 2018թ.այդ հատկացումները դադարեցվել են, քանի որ բացակայում էր իրավական հիմքը:Դա հանգեցրեց նրան, որ եղանակային դժվար պայմաններում աշխատողները չեն կարող ամիսներ շարունակ մնալ աշխատավայրում և պահպանել աշխատանքային ռեժիմը:

Որոտանի լեռնանցքի աշխատանքների Ժամանակավորապես դադարեցումը պայմանավորված է նոր աշխատակիցների համալրման դժվարությամբ, ինչը ցածր աշխատավարձերի արդյունք է՝ համակարգի միջին աշխատավարձը կազմում է 135000 դրամ:

Դիտարկումների թերակատարումը էական բացասական հետևանքներ առայժմ չի ունեցել, քանի որ չնայած հարկադիր պարապուրդին, աշխատողները լինում են աշխատավայրում և հնարավորինս ապահովում են աշխատանքների կատարումը:

«Հիդրոօդերևութաբանության և
մոնիթորինգի կենտրոն»ՊՈԱԿ-ի տնօրեն Լ.Ազիզյան